## Անվանիների հետքերով

# ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ ՀԱՄԱԼՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐՆԵՐԻ ՇԱՐՔԸ

Շատերի նման նա էլ շախմատի առաջին քայլերը սովորել է հորից: Մասնագիտությամբ մաթեմատիկոս-ծրագրավորող Արարատ Ասրյանի ղեկավարությամբ էլ չորսամյա Կարենը ծանոթացավ իմաստուն խաղի գաղտնիքներին: Ինը տարեկան էր, երբ նա լրացրեց վարպետության թեկնածուի նորման: 13 տարեկանում դարձավ հանրապետության պատանիների չեմպիոն: Հետո նոր հաջողությունների հասավ. երեք անգամ չեմպիոն հռչակվեց մինչեւ 18 տարեկանների Հայաստանի առաջնություններում: Ասրյանը երեք անգամ մասնակցել է աշխարհի պատանեկան առաջնությանը. 1994 թվականին Հունգարիայում կայացած ստուգատեսում մինչեւ 14 տարեկանների մրցավեճում արժանացավ արծաթե մեդալի, երեւանյան առաջնությունում, մինչեւ 18 տարեկանների պայքարում, չորրորդն էր: Անկեղծ ասած, վերջին ցուցանիշը մեկ ուրիշի համար կարող էր բարձունք համարվել, բայց ոչ շնորհաշատ հայ շախմատիստի:

Նա իր մասին խոսելու առիթ էր ստել դեռեւս 1995 թվականին կայացած շախմատի Հայաստանի առաջնությունում, երբ միավորը բաժանել էր գրոսմայստերներ Վլադիմիր Հակոբյանի, Արտաշես Մինասյանի, Արշակ Պետրոսյանի հետ:

Հետո 1996 թվականին Մոսկվայում կայացած ստուգատեսում տիրացել էր Գարրի Կասպարովի սահմանած գավաթին:

Կարենի աստղը վառ փայլատակեց շախմատի համաշխարհային երեւանյան օլիմպիադայում, երբ անցկացրած 12 պարտիայում վաստակեց 10 միավոր եւ առաջին անգամ լրացրեց միջազգային գրոսմայստերի նորման: Ի դեպ, եթե հայ շախմատիստը մեկ պարտիա ավելի անցկացրած լիներ, այն ժամանակ արդեն կստանար բաղձալի կոչումը:



Այս տարվա գարնանը Կրասնոդարում անցկացված «Ռուսաստանի գավաթ» անվանումը կրող մրցաշարում, որին մասնակցում էին 19 գրոսմայստեր եւ 24 միջազգային վարպետ, Կարենը երկրորդ անգամ լրացրեց գրոսմայստերի նորման (ինը հնարավորից 6 միավոր):

Ի դեպ, Ռուսաստանի գավաթի խաղարկության սմոլենսկյան եւ նովգորոդյան մրցաշարերում երեւանցի շախմատիստը շատ մոտ էր երրորդ անգամ գրոսմայստերական բարձունքը հաղթահարելուն, սակայն վերջին պահին ինչ-որ բան խանգարում էր, չէր բավարարում կես միավոր:

Եվ ահա եկավ ցանկալի պահը: Պետերբուրգում, շվեյցարական մրցակարգով անցկացված միջազգային մրցաշարում, որի 120 մասնակիցներից 40-ը գրոսմայստերներ էին, Ասրյանը ինը հնարավորից վաստակեց 6,5 միավոր, մի խումբ շախմատիստների հետ բաժանեց 2-8-րդ տեղը, եւ երրորդ անգամ լրացրեց միջազգային գրոսմայստերի նորման:

Այսպիսով, հայ գրոսմայստերների շարքը համալրվեց եւս մեկ նոր անդամով:

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսանողը 17 տարեկան է: Նա ծնվել է 1980 թվականին, ապրիլի 24-ին:

Այսօր Կարենն իր մշտական մարզչի՝ հոր հետ միասին կվերադառնա Երեւան:

Որդուն անհամբերությամբ սպասում է մայրը՝ տիկին Սուսաննան: Նա փոքր-ինչ անհանգիստ է: Վերջին հեռախոսազրույցի ժամանակ Կարենը միայն մի բանից էր դժգոհել, որ Պետերբուրգում քաղցած է մնում:

- Ընդհանրապես Կարենը վատ է սնվում: Իմ պատրաստած կերակուրներից բացի ուրիշ ոչինչ չի ուտում, այն էլ՝ շատ քիչ,- ասաց տիկին Սուսաննան: